## ՍՏՈՒԹԻՒՆԸ ՄԵԾ ՄԵՂՔ Է.

(Ռուսերէնից).

Ալէքսանդր Պավլովիչ կայսրը Եկատերինոսլաւի նահանգից անցնելիս՝ իջեւանեց մի իջեւանում չայ ըմպելու։ Մինչ չայը պատրաստումէին, Թագաւորը խօսակցումէր իջեւանի վերակացուի հետ և տեսնելով սեղանի վերայ նորա «Նոր կտակարանը» բաւական վայելուչ կազմով հարցրեց «Դու շատ շատ այս գրքի մէջ նայո՞ւմ ես։

— Ի հարկէ կարդումեմ, Ձերդ Մեծութիւն։

— Լաւ, պատասխանեց կայսրը. «Կարդա՛, կարդա. այդ շատ լաւ բան է հոգուդ փրկութիւն կըշահես և երկրաւոր բաղդ կըգտնես։ Բայց մինչև ո՞ր տեղ ես հասել.»

— Ս. Մատթէոսի աւետարանումն եմ։

Կայսրը վերակացուին մի յանձնարարութեամբ դուրս ուղարկեց և նորա բացակայութեան ժամանակ վեր առաւ գիրքը, շուտով Մատթէոսի աւետարանում բացեց մի երես, և դնելով այնտեղ հինգ հարիւր թղթադրամ՝ փակեց գիրքը։

Անցաւ համարեա կէս տարի, կայսրը երբ Պետերբուրգ էր վերադառնում, նոյն իջեւանից անցնելիս՝ հրամայեց իջեւանել.

— «Ողջոյն հին ծանօթ», ասաց կայսրը, դառնալով դէպ ի վերակացուն. «ինձանից յետոյ կարդացի՞ր քո Աւետարանը»։

— «Այո՛, Ձերդ Մեծութիւն, ամենայն օր կարդումէի.

— «Եւ շատ անցա՞ր»։

— «Մինչև Ս. Ղուկասի Աւետարանը».

— «Տեսնենք».

Թագաւորը բաց արեց գիրքը և գտաւ իւր դրած թղթադրամները հենց նոյն տեղը, «Ստութիւնը մեծ մեղք է». ասաց միապետը և վեր առնելով թղթադրամները, իւր բա՛ց արած երեսի վերայ ցոյց տուեց մի տուն և արտասանեց «կարդա՛»։

Վերակացուն դողդողալով կարդաց. «Խնդրեցէք նախ զարքայութիւն Աստուծոյ և զարդարութիւն նորա և այդ ամենայն յաւելցի ձեզ»։ (Մատ. գլ. Զ. 23).

— «Դու չըխնդրեցիր Աստուծոյ արքայութիւնը, արժանի չես և արքայական շնորհին». ասաց Ալէքսանդր Օրհնաբանեալը, և այս ասելով՝ դուրս ելաւ իջեւանից, դրամները բաշխեց աղքատներին, նստեց իւր կառքը և հեռացաւ։